ք. Երևան «12» հունվարի 2024 թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 2-Ա

«ԿՈՄՊԱՍ-1» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով 2024 թվականի հունվարի 10-ի Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից կազմակերպված «ԿԿ-ԲՄԱՁԲ-24/01.1» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 20-ի N 2 արձանագրությունը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 17-րդ ենթակետի դրույթները՝

ՊԱՐԶԵՑԻ

1. Կոմիտեի կողմից կազմակերպված «ԿԿ-ԲՄԱՇՁԲ-24/01.1» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում 2024 թվականի փետրվարի 20-ի հանձնաժողովի N 2 արձանագրությամբ ընտրված մասնակից է ճանաչվել «ԿՈՄՊԱՍ-1» ՍՊԸ -ն:

Կադաստրի կոմիտե-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԿՈՄՊԱՍ-1» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2024 թվականի մարտի 14-ին կնքած «ԿԿ-ԲՄԱՇՁԲ-24/01.1» ծածկագրով պայմանագրի շրջանակում «ԿՈՄՊԱՍ-1» ՍՊԸ-ն պարտավոր էր կատարել պայմանագրով սահմանված աշխատանքները:

Պետության կարիքների համար կադաստրային քարտեզներում չտեղադրված կամ չնույնականացված գույքերի նույնականացման և դաշտային հանութագրման աշխատանքների կատարման պետական գնման N ԿԿ-ԲՄԱՇՁԲ-24/01.1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.4.1 կետի համաձայն «ԿՈՄՊԱՍ-1» ՍՊԸ (այսուհետ՝ Կատարող) պարտավոր է Պայմանագրի N 1 հավելվածով (տեխնիկական առաջադրանքով) սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝

ղեկավարվելով գործող օրենսդրությամբ: Միևնույն ժամանակ, Պայմանագրի N 1 հավելվածի 3-րդ բաժնով սահմանված են տեխնիկական առաջադրանքի իրականացման միջոցառումները, որի 5-րդ կետի համաձայն՝ 3-րդ և 4-րդ կետում նշված փաստաթղթերը անհրաժեշտ է դիմումին կից ներկայացնել Կադաստրի կոմիտեի ցանկացած սպասարկման գրասենյակ կամ առցանց՝ e-cadastre.am կայքի միջոցով՝ կադաստրային գործին կցելու նպատակով, իսկ 6-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր եռամսյակ Կադաստրի կոմիտե ներկայացնել հաշվետվություն (բացատրագիր) կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով 5-րդ կետով կատարված աշխատանքների արդյունքում ձևավորված դիմումի բանալին և չափագրման ծածկագրերը:

Հայտնում ենք, որ Կատարողի կողմից չեն կատարվել Պայմանագրով նախատեսված վերը վկայակոչված պարտականությունները: Ավելին, սույն թվականի հունիսի 26-ի N ՄԽ/10273-2024 գրությամբ Պատվիրատուն հարցում է ուղարկել 2024 թվականի 2-րդ եռամսյակում կատարված աշխատանքների վերաբերյալ, որին ի պատասխան սույն թվականի հուլիսի 22-ին ներկայացվել է N 08 դիմումը: Մինչև N 08 դիմումը ստանալը Պատվիրատուի կողմից սույն թվականի հուլիսի 18-ի N ՄԽ/11505-2024 գրությամբ Կատարողին խելամիտ ժամանակ է տրամադրվել՝ պահանջվող հաշվետվության տրամադրման նպատակով, որին ի պատասխան սույն թվականի հուլիսի 24-ին ներկայացվել է N 09 դիմումը՝ վկայակոչելով N 08 դիմումը, որով կրկին անգամ պատշաճ հաշվետվություն չի ներկայացվել:

Տեղեկացնում ենք նաև, որ սույն թվականի հուլիսի 25-ի N ՄԽ/11926-2024 գրությամբ Կատարողին տեղեկացվել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան կատարված աշխատանքների վերաբերյալ կազմված հաշվետվություն (բացատրագիր)՝ այդ թվում նաև կատարված աշխատանքների արդյունքում ձևավորված դիմումների բանալիները և չափագրման ծածկագրերը խելամիտ ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ, որին ի պատասխան սույն թվականի հուլիսի 26-ի N 10 դիմումին կից ներկայացվել է «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ԲԱՑԱՏՐԱԳԻՐ)» վերտառությամբ փաստաթուղթը, որում նկարագրված աշխատանքների բովանդակությունը չի համապատասխանում Պայմանագրի անբաժանելի մասը կազմող տեխնիկական առաջադրանքի 3-րդ բաժնի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված պահանջներին, որպիսի փաստը, վերոնշյալ «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ԲԱՑԱՏՐԱԳՐՈՎ)» ընդունվել է նաև «ԿՈՄՊԱՍ-1» ՍՊԸ-ի կողմից:

Պայմանագրի միակողմանի լուծման համար հիմք է հանդիսանում Պայմանագրի անբաժանելի մասը կազմող տեխնիկական առաջադրանքի 3-րդ բաժնի 5-րդ և 6-րդ

կետերով սահմանված պահանջների խախտումը, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3 կետը:

Այսպիսով կատարողի կողմից չի ներկայացվել եռամսյակային պատշաճ հաշվետվություն, որում պետք է կցված լինեին կատարված աշխատանքների արդյունքում ձևավորված դիմումի բանալիները և չափագրման ծածկագրերը:

2. Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու ՀՀ Կառավարության N 526-Ն որոշման 33-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն պայմանագիրը միակողմանիորեն լուծվել է:

3. Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի՝ (...լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:...), գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու ՀՀ Կառավարության N 526-Ն որոշման 33-րդ հոդվածի 17-րդ կետի՝ (պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:) պահանջները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Առաջարկել լիազոր մարմնին ներառել «ԿՈՄՊԱՍ-1» ՍՊԸ-ին 2 տարի ժամկետով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Որոշման պատճենը սահմանված կարգով տեղադրել Կադաստրի կոմիտեի պաշտոնական կայքում և 1 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել «ԿՈՄՊԱՍ-1» ՍՊԸ-ին:

Գլխավոր քարտուղար՝

Մհեր Խաչատրյան

8/12/2024

X

ՄՀԵՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MHER 4108790022